ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«23» 01 2026 թ.
№ ԿԱՌԱ/103

ԱՁ Կարեն Պողոսյանին /ՀՎՀՀ 57347822/
ՀՀ, ք. Գյումրի, Ղորղանյան 7 նրբ., տ 1645, բն. 13
էլ. փոստի հասցե՝ laragharibyan9@gmail.com
Հեռ.՝ +374 98 82 86 76

ՀՀ պաշտպանության նախարարության և ԱՁ Կարեն Պողոսյանի միջև 17.11.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-8/33-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում ԱՁ Կարեն Պողոսյանը պետք է մատակարարեր 2000 հատ «ՀՀ պետական դրոշ» և 20 հատ «ՀՀ պետական դրոշ՝ դրոշաձողի»: 2025թ. դեկտեմբերի 22-ին ընկերությունը մատակարարել է 1500 հատ «ՀՀ պետական դրոշ» և 20 հատ «ՀՀ պետական դրոշ՝ դրոշաձողի», որոնք չեն ընդունվել Պայմանագրի տեխնիկական բնութագրի պայմաններին չհամապատասխանելու պատճառով, որից հետո ընկերության կողմից ապրանք չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը) ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.01.2026թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ ԱՁ Կարեն Պողոսյանը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 13923 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) և 8354 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև 23.12.2025թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 378000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 567000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2026թ. հունվարի 30-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 378000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 567000 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա ԱՁ Կարեն Պողոսյանը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2026թ. հունվարի 30-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2075 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ